# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 1

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 նոյեմբերի 2023թ. ք. Երևան

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Թադևոսյանս վերանայելով «ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-02/23» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2023թ. սեպտեմբերի 27-ին «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ «ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-02/23» ծածկագրով հրապարակել է «Պողպատե գլանվածքներ, թիթեղներ, խողովակ և լուծիչ» ապրանքների գնման ընթացակարգ, որի թիվ 1-30 (պողպատե գլանվածքներ, թիթեղներ, խողովակ) չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ԴՈՆԵՌ» ՍՊԸ: Ս/թ հոկտեմբերի 30-ին էլեկտրոնային աճուրդի գնման e_auction.am համակարգով «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագրի շնորհում:

01.11.2023թ. «ԳԱՌՆԻ-ԼԵՌ» ԳԱՄ ԲԲԸ տնօրենի փոփոխության պատճառով «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին, ևս մեկ անգամ, էլեկտրոնային փոստի միջոցով, ուղարկվել է № ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-02/23-01/007 պայմանագրի փոփոխված, խմբագրված նախագիծը և ուղեկցող գրություն, առաջարկելով այն հաստատել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ և ներբեռնել համակարգ, ինչպես նաև նույն օրը հրավերով սահմանված որակավորման և պայմանագրի ապահովումները լրացնել և բնօրինակները՝ կից գրությամբ մուտքագրել «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ փաստաթղթաշրջանառության համակարգ:

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ սահմանված ժամկետում համակարգ չի ներբեռնել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը, ինչպես նաև Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ չի մուտքագրել որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու մասին գրությունը:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2023թ. հոկտեմբերի 10-ին հրավիրել է ընթացակարգի արտահերթ № 3 նիստ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի, այն է՝ **որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու իրավունքից,** և 37 հոդվածի 4-րդ կետի, այն է՝ **պայմանագիր չի կնքվում,** պահանջներով գնման ընթացակարգը թիվ 1-30 (պողպատե գլանվածքներ, թիթեղներ, խողովակ) չափաբաժիններով հայտարարել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով «ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-02/23» ծածկագրով հրապարակված «Պողպատե գլանվածքներ,

թիթեղներ, խողովակ և լուծիչ» ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի № 3 արտահերթ նիստի որոշումը՝ գնման ընթացակարգը թիվ 1-30 (պողպատե գլանվածքներ, թիթեղներ, խողովակ) չափաբաժիններով չկայացած հայտարարելու մասին

## ՈՐՈՇԵՑԻ

1. «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրվանից:

3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին:

**Տնօրենի ժ/պ** **Տ. Թադևոսյան**

Կատարող՝
ԳԲ պետ Ա. Ղազարյան
093-56-60-66